

Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ  
ԼԵԶՎԻ ՆՈՐ  
ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Տ

ԵՐԵՎԱՆ - 2007

*Handwritten signature*

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԼԵԶՎԻ  
ՆՈՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

**ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ - 2007**

Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության  
ֆակուլտետի խորհուրդը

Խմբագիր՝ Բ. Գ. Ղ., պրոֆ. Յու. Գաբրիելյան

**Մաքելյան Ս. Ռ.**

Գերմաներեն լեզվի նոր ուղղագրությունը:  
(Ուսումնամեթոդական ձեռնարկ): ԵՊՀ.- Եր.: Երևանի համալս.  
հրատ., 2007թ. 44 էջ:

Սույն ուսումնամեթոդական ձեռնարկը ներկայացնում է գերմաներենի նոր, բարեփոխված ուղղագրության կանոնների ամբողջական համակարգը, որը գործում է Գերմանիայում, Ավստրիայում և Շվեյցարիայում 1998թ. օգոստոսի 1-ից: Չեռնարկի նպատակն է՝ հայերեն լեզվով բացատրել նշված կանոնների էությունն ու տրամաբանությունը, ինչպես նաև տալ առանձին նմուշ-առաջադրանքներ համապատասխան կանոնների յուրացման ու ամրապնդման համար: Վերջում տրվում են նաև այդ առաջադրանքների լուծումները: Չեռնարկը նախատեսված է գերմաներեն լեզու դասավանդողների, ԲՈՒՀ-երի ուսանողների և դպրոցականների համար: Այն կարող է հետաքրքրել նաև ընդհանրապես այս լեզուն ուսումնասիրողներին:

460202103  
U 704(02)07 2007

ISBN 5-8084-0815-6

© Մաքելյան Ս. Ռ., 2007 թ.

**ՆԱԽԱԲԱՆ**

1996թ. հուլիսին գերմանախոս երկրների քաղաքական ներկայացուցիչները Վիեննայում ստորագրեցին միասնական հայտարարություն գերմաներեն լեզվի նոր ուղղագրության մասին: Այդպիսով ավարտին հասցվեց գերմաներենի ուղղագրության բարեփոխումների բազմամյա ծրագիրը, որի նպատակն այդ ուղղագրության կանոնների պարզեցումն էր և համապատասխանեցումն արդի պահանջներին: Գերմանիայի, Ավստրիայի և Շվեյցարիայի դպրոցներում նոր ուղղագրության ուսուցումը սկսվեց 1998թ. օգոստոսի 1-ից: Մեզանում, սակայն, որևէ պաշտոնական անդրադարձ կամ ցուցում դրա վերաբերյալ մինչ օրս գոյություն չունի: Գպրոցներում գերմաներեն լեզվի ուսուցումը շարունակվում է հինմականում հին ուղղագրությամբ դասագրքերով, իսկ գերմաներենի նոր ուղղագրության ներդրումը մնում է մանկավարժների հայեցողությանը: Նույնը կարելի է ասել բարձրագույն ուսումնական հաստատությունների մասին: Սույն ուսումնամեթոդական ձեռնարկը նպատակ ունի լրացնել այդ բացը և համառոտ կերպով ներկայացնել գերմաներենի նոր ուղղագրության կանոնները, ինչպես նաև տալ առանձին նմուշ-առաջադրանքներ համապատասխան կանոնների յուրացման և ամրապնդման համար: Չեռնարկի վերջում տրվում են այդ առաջադրանքների լուծումները, որոնք կնպաստեն շարադրված կանոնների գործնական կիրառմանը:

Մինչ այդ ասենք, որ նշված կանոնները գերմանացի, ավստրիացի և շվեյցարացի մասնագետների համատեղ աշխատանքի արդյունք են, որոնք փորձաքննության են ենթարկվել նաև ուղղագրության միջազգային աշխատանքային խմբի կողմից: Հարկ է նշել, որ գերմաներենի նոր ուղղագրության վերջնական տարբերակի հրապարակումից առաջ այն քննարկվել է պետական – պաշտոնական կազմակերպությունների, ինչպես նաև հասարակության լայն շրջանների կողմից:

Այսպիսով, գերմաներենի նոր ուղղագրությունը գալիս է փոխարինելու դեռ 1902թ. պաշտոնապես ընդունված ուղղագրությանը, որն ուժի մեջ էր հասնարվում մինչև 2005 թվականը: Ընդհանուր առմամբ, բացի հին կանոնների պարզեցումից, նոր ուղղագրությունը ձգտում է վերացնել բացառություններն ու անկանոնությունները և հասնել գրության համակարգայնացման ու միօրինակության: Միևնույն ժամանակ խնդիր է դրվում՝ պահպանել գերմաներենի գրամշակութային ավանդույթները, ինչպես նաև տեքստերի ընթեռնելիությունը:

Գերմաներենի նոր ուղղագրական կանոնները վերաբերում են բոլոր համապատասխան ոլորտներին և այստեղ ներկայացվում ըստ այդ ոլորտների: